

քիչ հեռու կը տեսնուի Կանան ուր Փրկիչը ջուրը գինիի փոխարկեց, նոյն տեղէն կարելի է Թաբոր ելլել»։

Թէոդոս (530), Անտոնինոս (570) այցելած են Կանա . վերջնոյն համար կ'ըսուի թէ երբ հոն այցելեց՝ իր ծնողաց անունները գրեց այն նստարանին վրայ ուր Փրկիչը բազմեցաւ հարսանիքի սրահին մէջ<sup>(\*)</sup>։ Գարձեալ հոն գտաւ երկուքը այն թակոյկներէն որ գործածուեցան հարսանիքին մէջ։ Այն քարը որ ցոյց տրուած էր խալայի ուխտաւորին և որուն վրայ, կ'ըսեն թէ Յիսուս բազմած է հարսանիքի ժամանակ, 1885 ին գտնուած է ոչ թէ Կանայի մէջ, այլ Elatééի (Phocide, հին Յունաստան) եկեղեցւոյն աւերակներուն մէջ։ Քարը գորշ մարմար է, 2.33 մ. երկայն, 0.64 մ. լայն և 0.33 մ. թանձր։ Չ. կամ է. դարու գիրերով կը կարգացուի հետեւեալ յունարէն արձանագրութիւնը. «Այս քարը բերուած է Կանա Գալիլիացւոց քաղաքէն ուր Տէրը ջուրը գինիի փոխեց»։ Այս մարմարի կտորը այժմ պահուած է Աթէնքի մէջ, խլամներու արշաւանքէն առաջ Կանայէն բերուած կըրնայ ըլլալ։ Արգուլֆէն յետոյ Վիլլիպալտ ալ այցելած է հոն, և կ'ըսէ. «Նազարէթէն . . . հասանք Կանա քաղաքը ուր Տէրը ջուրը գինիի փոխեց։ Հոն կը տեսնուի եկեղեցի մը. սեղանին վրայ կար մին վեց թակոյկներէն որոնց մէջ Տէրը ջուր լեցնել տալով գինիի փոխեց. հոն օր մը անցուցինք և յետոյ անկէ Թաբոր բարձրացանք<sup>(\*\*)</sup>»։ Մինչև թ. դարու սկիզբը գոյու-

(\*) Չէ գտնուած այդ անուններու արձանագրութիւնը, այլ գտնուած է միայն 1885 ին Elatééի արձանագրութիւնը (Gan. R. հաս. Դ. էջ 305, ծանօթութիւն), ինչպէս յիշուած է։

(\*\*) Կանայի վեց թակոյկներն ալ կ'ըսուի թէ Խաչակիրներու ժամանակ Ֆրանսա բերուած ու պահուած են այլ եւ այլ բանգարան-